

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՅՆ»

Երևանում վերջերս լույս տեսավ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նոր օրգանը՝ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը։

Դա մեր հանրապետության մշակութային կյանքում նշանակալից և կարևոր երևույթ էր։

Մեր գրասեր հասարակայնությունը սրտագին երախտագիտությամբ ողջունեց շաբաթաթերթի հրատարակությունը, որի հիմնական նպատակն է վերածնված Մայր Հայրենիքի և հայրենի ափերի վրա խաղաղ և ստեղծագործ կյանքով ապրող հայ ժողովրդի ձայնը հասցնել Սփյուռքի օտար բայց հյուրընկալ հորիզոնների ներքո իր գոյությունը պահող հայության հայրենաբաղձ բեկորներին, և լինել կենդանի հոգևոր կամուրջ, անխորտակելի և ամուր, Մայր Հայրենիքի և արտասահմանի միջև։

Սփյուռքի հայությունը նույնպես սիրով ողջունեց «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի հրատարակությունը։

Մայր Հայրենիքը միշտ գուրգուրանքով, հարազատորեն է հոգացել աշխարհով մեկ «զօրէն մոլորական աստեղաց» փշուր-փշուր ցրված իր տարագիր զավակների կյանքի և ճակատագրի մասին։

Հայրենիքը պանդուխտ հայության համար հարազատ օջախ է կառուցել և բոլորին կանչել Տուն։

Տարիներ շարունակ օտար ափերից հայրենադարձ քարավաններ եկել, հասել են հայրենի փրկարար և ապահով նավահանգիստը։

Հայրենադարձ հայությունն իր հերթին իր մտքի, իր սրտի բազմազան շնորհները, իր շինարար բազկի ուժն է խառնել մեր պայծառ կյանքի կառուցման հերոսական սխրանքներին։

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը իր առաջ հայրենասիրական, վեհ նպատակ է դրել ոչ միայն աշխատել Սփյուռքի հայության սրտում կենդանի ու վառ պահել հայրենի երկրի, մայրենի լեզվի սերը, հայոց պատմության ոգին, այլ նաև հանգամանորեն արտացոլել իր էջերում արտասահմանի հայության կյանքը, արձագանքել նրանց հոգուց բխած հայրենակարոտ խոսքերին, նրանց սրտի նվիրական զգացմունքներին, որպես բարի և ազնիվ խորհրդատու։

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի հրատարակությունը սիրով և օրհնությամբ ողջունեց նաև ազգիս հայրենասեր հայրապետը, խմբագրության ուղղած Իր հետևյալ հայրենաբույր գրությամբ, որը լույս տեսավ շաբաթաթերթի առաջին համարում.

«Ինչպե՞ս չուրախանա Հայոց Հայրապետը, երբ անա հայրենի ձայն մը ևս կուգա հնչել հայոց լեռներեն, թռչելու և հասնելու համար ի սփյուռս աշխարհի ցրված մեր ազգի պանդուխտ զավակներուն:

Ուրախ սրտով կողջունենք ու կշնորհավորենք ձեզ, հաջողության սրտագին մաղթանքներով: Նաև անվերապահ լավատեսությամբ, վասնզի քաջ կհանշենանք հոգին արտերկրի հայերուն և գիտենք, թե իրապես անոնք բոլորը ծառա են ձայնին, որ մեր վերածնած Մայր Հայրենիքեն կուգա: Հայրենիքի ձայնը անոնց համար քաղցր է, կենարար է, փրկարար է, պատգամ է:

Հայոց պատմությունը իր նոր, բախտորոշ ու ստեղծարար մեկ շրջանը սկսած է ապրիլ Մայր Հողին վրա, անա մոտ հիսուն տարիներե ի վեր: Այս ճշմարտությունը հետզհետե կբացահայտվի իր բոլոր երեսներով, սքանչելի արտահայտություններով, խոր իմաստավորումներով: Արտասահմանի հայ մարդը չի կրնար չտեսնել ու չզգալ այս ճշմարտությունը և հետևաբար չի կրնար շարունակաբար «Հայրենիքի ձայն»-ին:

Սփյուռքի գրեթե բոլոր հայ գաղութները անձամբ այցելած ըլլալով, այսու ձեզի վկայությունը կբերենք, թե պանդուխտ բոլոր հայերը անխտիր, որոնք հայու սիրտ կկրեն, իրենց կարոտի ու հիացումի հայացքը սևեռած կպահեն դեպի արդի Հայկական պետությունը՝ խորհրդային Հայաստանը, անոր ներկա իրականության մեջ գտնելով իրենց ազգային գերագույն մխիթարությունը: Որովհետև այստեղ, և միայն այստեղ է Հայոց Մայր Երկիրը, հավիտենական Հայաստանը, այստեղ, միայն այստեղ կգտնվին հայ հանճարի ու մշակույթի բոլոր վավերական ակունքները, և այստեղ ու միայն այստեղ է, որ կգրվի հայոց պատմությունը:

Սփյուռքը լրացուցիչ իրողություն է, օժանդակ ուժ է և իրական արժեք կներկայացնե իբրև հայրենական ամբողջիկամեկ անբաժան մասը: Առանց Մայր Հայրենիքի, Սփյուռքը մոլորություն է և ազգային հոգիի կազմալուծում: Մայր Հայրենիքը սփյուռքով առավել ամբողջական է, առավել հզոր և առավել լի լուսավոր ապագայի հեռանկարներով:

Արդեն ժամանակն է, որ բոլոր հայերը Մայր Հայրենիքեն ներս, թե Սփյուռքի տարածքի վրա, ուղիղ և հստակ հասկնան այս ճշմարտությունները:

Հետևաբար դուք ազատ ու համարձակ, բարձր հնչեցուցեք հայրենիքի ձայնը, հայաստանցի ժողովուրդի հարազատ ձայնը և վստահ եղեք, թե պանդուխտ բոլոր հայերը լայն պիտի բանան իրենց սրտերն ու հոգիները և ընդունին զայն իբրև մասունք սուրբ հաղորդության:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն Հայոց Հայրապետը ձեզի կմաղթե լիակատար հաջողություն և ձեր միջոցավ Իր օրհնությունը կհղե Սփյուռքի իր հարազատ զավակներուն:

ՎԱԶԳԵՆ Ա

Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս
Ամենայն Հայոց»:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն ողջունում է «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի հրատարակությունը, մաղթելով, որ նրա էջերից միշտ պայծառ, միշտ բարձր ու տիրական հնչի մեր վերածնված Մայր Հայրենիքի հարազատ ձայնը և հասնի հեռավոր ափերի վրա ապրող մեր պանդուխտ եղբայրների և քույրերի սրտերին, որպեսզի հայ ժողովուրդը, որպես մեկ և անբաժան հավաքականություն, ապրի Մայր Հայրենիքով և Մայր Հայրենիքի համար։